# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի № 1467-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի № 1467-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» ՀՀ օրենքի 122-րդ հոդվածի 2-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ՀՀ կառավարությունը ***որոշում է***.

1. ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի բնական կորուստների չափերը սահմանելու մասին» № 1467-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) Որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ ենթակետով. «11) հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող նավթամթերքի տեղափոխման և պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը՝ համաձայն № 11 հավելվածի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագող (ծագած) հարաբերությունների վրա:
3. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո այն չի տարածվում մինչ այդ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կիրառվող բնական կորստի նորմերի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ
ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության 2019 թվականի

_______________ ____ №____-Ն որոշման

Հավելված 11

ՀՀ կառավարության 2018 թվականի

դեկտեմբերի 13-ի № 1467-Ն որոշման

**ԶԱՓԵՐ**

**ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՆԱՎԹԱՄԹԵՐՔԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Նավթամթերքի բնական կորուստը բեռնափոխադրման, բեռնաթափման, բեռնաբարձման և պահպանման ժամանակ վառելիքի զանգվածի բնականոն նվազումն է որակի պահպանմամբ, ինչը ֆիզիկաքիմիական, մեխանիկական, բնակլիմայական գործոնների ազդեցության հետևանք է:
2. Բնական կորուստներին չեն վերաբերում նավթամթերքի այն պակասորդները, որոնք առաջացել են տնտեսավարող սուբյեկտի կողմից սահմանված պահանջների և տեխնիկական շահագործման կանոնների խախտման կամ բնական աղետների հետևանքներով:
3. Բնական կորուստներ չեն այն կորուստները, որոնք առաջացել են տարրողությունների և խողովակաշարերի մաքրման և վերանորոգման ցանկացած տեսակի աշխատանքների հետևանքով, վթարային կորուստները, ինչպես նաև կորուստները գողոնից, բնական աղետներից և ներպահեստային պոմպային մղումներից:
4. Բնական կորուստների հաշվարկն իրականացվում է սույն հավելվածով սահմանված չափերին համապատասխան՝ դրանք համադրելով նավթամթերքի փաստացի մնացորդային զանգվածի հետ: Այն դեպքում, երբ փաստացի մնացորդային զանգվածն ավելի մեծ է, քան սույն հավելվածով սահմանված բնական կորստի չափերով հաշվարկված զանգվածը, հիմք է ընդունվում փաստացի մնացորդային զանգվածը: Այն

դեպքում, երբ փաստացի մնացորդային զանգվածն ավելի փոքր է, քան սույն հավելվածով սահմանված բնական կորստի չափերով հաշվարկված զանգվածը, հիմք է ընդունվում սույն հավելվածով սահմանված բնական կորստի չափերով հաշվարկված զանգվածը:

5. Նավթամթերքի ըստ տեսակների դասերը ներկայացված են սույն հավելվածի N 6-րդ աղյուսակով:

**ՆԱՎԹԱՄԹԵՐՔԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ**

6. Նավթամթերքի տեղափոխման դեպքում բնական կորստի չափաքանակը, ըստ տրանսպորտային միջոցների (տեսակների) տեղափոխման, հաշվարկվում է ապրանքաուղեկից փաստաթղթերով տեղափոխման համար հայտարարագրված և փաստացի բարձված բեռի ընդհանուր զանգվածը բազմապատկելով Աղյուսակ 1-ում ներկայացված տոկոսներով արտահայտված կորստի նորմերով:

7. Եթե նավթամթերքը տեղափոխվում է տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով, ապա նավթամթերքի բնական կորստի հաշվարկման չափը ընդունվում է Աղյուսակ 1-ով ներկայացված տրանսպորտային միջոցների տեսակների համար սահմանված կորստի չափերի հանրագումարի չափով:

**Աղյուսակ N 1.**

**(կգ-ներով 1 տոննա նավթամթերքի տեղափոխման դե**

| **Նավթամթերքի դաս** | **Նավթամթերքի տեղափոխման դեպքում բնական կորուստնե** | | |
|---|---|---|---|
| | **Ավտոմոբիլային տրանսպորտ** | **Երկաթուղային տրանսպորտ** | **Ջրայ** **տրա** |
| 1, 2, | 0.15 | 0.25 | 2.46 |
| 3, 4 | 0.015 | 0.17 | 1.42 |
| 5 | 0.004 | 0.08 | 1.26 |
| 6 | 0.015 | 0.092 | 1.26 |

8. Նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններում ընդունման (բեռնաբարձման) դեպքում ներկայացված է Աղյուսակ N 2-ով:

**Աղյուսակ N 2**

**(կգ-ներով՝ 1 տոննա նավթամթերքի ընդունման (բեռնաբարձման) դեպքում)**

| **Տարողության տեսակ** | **Նավթամթերքի դաս** | **Նավթամթերքի բն չափերը** |
|---|---|---|
| **Վերգետնյա մետաղական** | 1 | 0,39 |
| | 2 | 0,32 |
| | 3 | 0,08 |
| | 4 | 0,05 |
| | 5 | 0,04 |
| | 6 | 1,08 |
| **Վերգետնյա մետաղական ներքին պոնտոններով** | 1 | 0,25 |
| | 2 | 0,26 |
| **Ստորգետնյա** | 1 | 0,22 |
| | 2 | 0,16 |
| | 3 | 0,04 |
| | 4 | 0,03 |
| | 5 | 0,02 |
| | 6 | 1,07 |

9. Բնական կորստի չափը մազութի համար՝ բաց հորային ամբարներում պահպանման, ընդունման (բեռնաբարձման) և դատարկման (բեռնաթափման) դեպքում կգ-ներով 1 տոննա մազութի համար կազմում է 2.36 կգ:
10. Նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններից տրանսպորտային միջոցների համապատասխան տարողություններ ընդունման (բեռնաբարձման) դեպքում ներկայացվում է Աղյուսակ N 3-ով:

**Աղյուսակ N 3**

**(կգ-ներով 1 տոննա բարձվող նավթամթերքի քանակի)**

| **Տարողության տեսակ** | **Նավթամթերքի դաս** | **Կորստի չափը** |
|---|---|---|
| **Երկաթուղային գլանատակառներ (վագոն ցիստեռներ)** | 1 | 0,16 |
| | 2 | 0,12 |
| | 3 | 0,02 |
| | 4 | 0,02 |
| | 5 | 0,025 |
| | 6 | 0,05 |
| **Ավտոցիստեռներ (բենզավոզներ)** | 1 | 0,14 |
| | 2 | 0,11 |
| | 3 | 0,02 |
| | 4 | 0,02 |
| | 5 | 0,025 |

| | | |
|---|---|---|
| | 6 | 0,05 |
| **Ջրային տրանսպորտ** | 1 | 0,15 |
| | 2 | 0,11 |
| | 3 | 0,02 |
| | 4 | 0,018 |
| | 5 | 0,02 |
| | 6 | 0,05 |

**Նավթամթերքի տարողություններում պահպանման ընթացքում բնական կորուստների չափերը**

11. Նավթամթերքի տարողություններում պահպանման դեպքում բնական կորստի չափը հաշվարկվում է փաստաթղթերով ձևակերպված պահուստավորման ընդունված ու տարողություններում պահվող նավթամթերքի միջին ամսական փաստացի զանգվածը բազմապատկելով Աղյուսակ N 4-ում և Աղյուսակ N 5-ում ներկայացված կորստի չափերով:
12. Պահվող նավթամթերքի միջին ամսական փաստացի զանգվածը հաշվարկվում է որպես ամսվա ընթացքում յուրաքանչյուր օրացուցային օրվա ավարտին տարողություններում պահվող նավթամթերքի զանգվածների միջին թվաբանական մեծություն:
13. Կորստի նորմերը սահմանվում են ելնելով նավթամթերքի դասից, հաշվի առնելով նաև բեռնաբարձման և բեռնաթափման հետևանքով նավթամթերքի բնական կորուստների առաջացումը:
14. Առաջին և երկրորդ խմբի նավթամթերքի բնական կորստի չափը տարողություններում պահպանման **յուրաքանչյուր** ամսվա ընթացքում ներկայացվում է Աղյուսակ N 4-ով:

**Աղյուսակ N 4**

**(կգ-ներով 1 տոննա պահպանվող նավթամթերքի քանակի համար, ամսական կտրվածքով)**

| **Տարողության տեսակ** | **Նավթամթերքի դաս** | | | **Կորստի չափը Տարողությունների ծավալը** | |
|---|---|---|---|---|---|
| | | **Մինչև 400 ($մ^3$)** | **400-ից մինչև 700 ($մ^3$)** | **700-ից մինչև 1000 ($մ^3$)** | **1000-ից մինչև 2000 ($մ^3$)** |
| **Վերգետնյա մետաղական** | 1 | 0,78 | 0.74 | 0,71 | 0.51 |
| **Վերգետնյա մետաղական** | 1 | 0,18 | 0.17 | 0,16 | 0.12 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **ներքին պոնտոններով** | | | | | |
| **Վերգետ նյա մետաղական** | 2 | 0,7 | 0.63 | 0,57 | 0.44 |
| **Վերգետ նյա մետաղական ներքին պոնտոններով** | 2 | 0,15 | 0.14 | 0,13 | 0.11 |
| **Ստորգետ նյա** | 1 | 0,15 | | | |
| **Ստորգետ նյա** | 2 | 0,05 | | | |

15. 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ դասերի նավթամթերքի բնական կորստի չափը տարրողություններում պահպանման յուրաքանչյուր ամսվա ընթացքում ներկայացվում է Աղյուսակ N 5-ով:

**Աղյուսակ N 5**

**(կգ-ներով 1 տոննա պահպանվող նավթամթերքի քանակի համար, ամսական կտրվածքով)**

| **Տարողության տեսակ** | **Կորստի չափը** | | | |
|---|---|---|---|---|
| | **3** | **4** | **5** | **6** |
| **Վերգետնյա մետաղական** | 0,13 | 0,09 | 0,04 | 0,12 |
| **Ստորգետնյա** | 0,07 | 0,06 | 0,02 | 0,12 |

**Աղյուսակ N 6.**

| **Նավթամթերքի դաս** | **Նավթամթերքի տեսակները** |
|---|---|

**1** Ավտոմոբիլային բենզիններ բոլոր տեսակների.

Ուղղակի թորված բենզին.

Գազի կայուն կոնդենսատ.

Բենզին գազային կայուն (գազային կոնդենսատից).
**2** Նավթային լուծիչներ բոլոր տեսակների` $+50^0$ C-ից մինչև $+100^0$ C
ջերմաստիճանով

Ավիացիոն բենզիններ բոլոր տեսակների

Տեխնիկական իզոօկտան

Նորմալ հեպտան

Նավթային բենզոլ

Օգտագործված նավթամթերքներ CHO մակնիշի

Ռեակտիվ շարժիչների վառելիք T-2
**3** Նավթային լուծիչներ բոլոր տեսակների $+100^0$ C-ից բարձր եռման

Ռեակտիվ շարժիչների վառելիք $+100^0$ C-ից մինչև $+150^0$ C եռման
բացառությամբ T-2

Նավթային սոլվենտ

Տեխնիկական կերոսին

Լիգրոյին

Նավթային քսիլոլ

Նավթային տոլուոլ

Էթիլբենզոլ տեխնիկական
**4** Կեռոսին լուսավորման համար բոլոր տեսակների

Դիզելային և նավային վառելիքներ մինուս $10^0$ C-ից ցածր պղտոր
կամ զտման սահմանային ջերմաստիճանով

Ռեակտիվ շարժիչներ վառելիք, $+150^0$ C-ից բարձր եռման ջերմաս

Իզոպռոպիլբենզոլ տեխնիկական
**5** Դիզելային և նավային վառելիքներ մինուս $10^0$ C-ից բարձր պղտոր
կամ զտման սահմանային ջերմաստիճանով

Վառարանային վառելիք կենցաղային

| | |
|---|---|
| | Միջին և ցածր պտույտով դիզելային շարժիչային վառելիք |
| **6** | Բոլոր տեսակի մազութներ<br><br>Քսայուղեր բոլոր տեսակի<br><br>Այլ հեղուկ նավթամթերքներ, որոնք պահանջում են տաքացում<br><br>Օգտագործված նավթամթերքներ բացառությամբ CHO մակնիշի |